ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 5, 1948 *Общественные науки*

Ա. Մարուխյան

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ

Քաղաքացիական կարճատև պատերազմը (1920 թ. նոյեմբերի 29—1921 թ. մարտ) ավարտելուց հետո սովետական իշխանության առաջնահերթ խնդիրն էր վերականգնել իմպերիալիստական, ազգամիջյան ու քաղաքացիական պատերազմների ընթացքում Հայաստանի քայքայված ժողովրդական տնտեսությունը. և որովհետև ժողովրդական տնտեսության հիմնական ու գերակշռող ճյուղը գյուղատնտեսությունն էր, ապա խոսքը վերաբերում էր գլխավորապես գյուղատնտեսության վերականգնմանը։

Գյուղատնտեսության վերականգնման պրոցեսը 1921—1922 թվերին ընթանում էր շատ դանդաղ, որը չէր բավարարում մեր երկրի տնտեսական-քաղաքական պահանջին։ Անհրաժեշտ էր արագորեն բուժել անցյալի վերքերը, լիկվիդացնել սովը, բնակչությանն ապահովել հաղուստեղենով, հիվանդությունների ու համաճարակի առաջն առնել։

Սովետական իշխանությունը, որպես ժառանգություն, ստացել էր միանգամայն քայքայված տնտեսություն։ Ժողովրդական տնտեսության հիմնական մասը՝ գյուղատնտեսությունը, քայքայված էր ոչ միայն ցանքային տարածությունների կրճատման, բերքատվության անկման իմաստով, այլև նյութապես, տեխնիկապես։ Մեծ մասամբ ոչնչացված էր բանող անասունը, կթանը, արտադրության միջոցները, խիստ նվազել էր բանվորական ուժը։ Գյուղացիության ճնշող մեծամասնությունը ի վիճակի չէր ինքնուրույն կերպով վերականգնել իր քայքայված տնտեսությունը։

Թե ինչ աստիճան էր քայքայված գյուղատնտեսությունն այդ տարիներին, երևում է հետևյալ տվյալներից.

Ամբողջ երկրում 1919—1920 թ. թ. գյուղացիական ցանքերի տարածությունը 1914 թվականի նկատմամբ կազմում էր 23,9 տոկ. այն դեպքում, երբ Սովետական Ռուսաստանում այդ հավասար էր 86 տոկոսի։ Որոշ գավառներում դրությունը ավելի ողբերգական էր. Երևանի գավառում այդ հարաբերությունը հասել էր 11,8 տոկոսի, Ալեքսանդրոպոլի գավառում 10,3 տոկոսի, Էջմիածնի գավառում՝ 17,1 տոկոսի, Նոր-Բայազետի գավառում՝ 17,2 տոկոսի։[1] Հայաստանում 146,193 գյուղացիական տնտեսությունից 91,000 տնտեսություն անասուն բոլորովին չուներ, որից 89,000-ը զրկված էր բանող անասունից, գյուղացիական տնտեսությունների ավելի քան 74 տոկոսը զուրկ էր գյուղատնտեսական ամենն տեսակի ինվենտարից։[2]

Վերականգնման դանդաղ ընթացքի պատճառն էր 1921 թվականի գարնանացանի ժամանակ դաշնակների ավանտյուրիստական ելույթը սո-

---

[1] Հայկական ՍՍՌ Երևանի Կենտրոնական Արխիվ. Ֆոնդ 163, գ. 7, թերթ 14—15։

[2] Նույն տեղում, գործ 4453, թերթ 1։

վետական իշխանության դեմ։ Այդ ավանտյուրան մեծ չափով խանգարեց գարնանացանի գործին։

Եվ վերջապես երրորդ հիմնական պատճառն այն է, որ գյուղատնտեսությունը վերականգնվում էր մանր ապրանքային, մանրատված ու լիովին աղքատացած բազայի վրա, որովհետև, չնայած իր կաուլիկային վիճակին, ռևոլուցիայից հետո գյուղացիական տնտեսությունը էլ ավելի մանրատվեց։ Օրինակ՝ եթե ռևոլուցիայից առաջ երկրում կար ընդամենը մոտ 140 հազար գյուղացիական տնտեսություն, ապա հողաբաժանման մի քանի տարիների ընթացքում այն հասավ մոտ 155 հազարի և սակավազոր տնտեսությունների մանրացումը դնալով շարունակվում էր։

Այս երևույթը բացասաբար անդրադարձավ արտադրության արագ ընդլայնման ու աշխատանքի արտադրողականության բարձրացման վրա, որովհետև

«...մանրգյուղացիական տնտեսությունն իր մասսայական առումով տարեց տարի ոչ միայն ընդլայնված վերարտադրություն չի իրականացնում, այլ, ընդհակառակը, նա միշտ չէ, որ հնարավորություն ունի իրականացնելու մինչև իսկ պարզ վերարտադրությունը»[1]

Ընկ. Ստալինը Համ Կ(բ) Պ 15-րդ համագումարում տված իր զեկուցման մեջ այդ բացատրում է նաև մեր գյուղի կուլտուրական ու տեխնիկական խիստ հետամնացությամբ, որը առավել ևս վերաբերում է Հայաստանի գյուղացիությանը։

Մեծ խոչընդոտ էր սերմացուի հարցը։ Գյուղացիական տնտեսությունների ճնշող մեծամասնությունը չուներ անհրաժեշտ քանակությամբ սերմացու։

Բերված բոլոր փաստերի արմատն այն է, որ վերականգնման առաջին շրջանում՝ 1921—1922 թվերին Հայաստանի գյուղացիության ավելի քան 78 տոկոսը գտնվում էր ծայրահեղ չքավորության մեջ և ի վիճակի չէր սեփական միջոցներով վերականգնել իր մանրգյուղացիական, աղքատ տնտեսությունը։

Սովետական իշխանության առաջնահերթ խնդիրն էր հացի պրոբլեմի լուծումը քաղաքներում և գյուղերում, կատաղի կերպով մոլեգնող սովի շուտափույթ վերացումը։ Բայց այդ հեշտ լուծվող խնդիր չէր. գյուղացիությունը ոչ սերմացու ուներ և ոչ էլ ինվենտար ու քաշող ուժ. իսկ նոր ստեղծված սովետական իշխանությունը չուներ անհրաժեշտ ռեզերվներ գյուղացիությանը օգնելու համար։

Այդ ծանր օրերին հայ ժողովրդին նորից ձեռք մեկնեց ռուս մեծ ժողովուրդը. 1921 թվականին Սովետական Ռուսաստանից ստացվեց 141.500 փութ սերմացու, 1922 թ.՝ 100.000 փութ և 1923 թվականին՝ 650.000 փ.։

Սովետական Ռուսաստանի կողմից՝ իր սուղ պայմանների հաշվին Հայաստանի աշխատավորությանը ցույց տրված այս օգնությունը վճռական դեր խաղաց և արագացրեց գյուղատնտեսության վերականգնման ընթացքը, գյուղացիությանը ներշնչեց տնտեսական վերելքի հույս։

Ծայրահեղ սովի ու աղքատության հետևանքով դժվարանում էր սերմացու ֆոնդի պահպանումն ու օգտագործումը. տեղերում սերմացու հացահատիկը սպառում էին որպես հաց։ Մյուս կողմից ռազմական կոմունիզ-

[1] Ի. Վ. Ստալին—Լենինիզմի հարցերը, էջ 448, հայերեն երկրորդ հրատ. 1937 թ.։

մի ժամանակ գործող պարենամատակարարման քաղաքականությունը չէր նպաստում սերմացու ֆոնդերի գոյացմանը։ Ուստի անհրաժեշտ էր կառավարման նոր օրենսդրությամբ կարգավորել, ճիշտ ընթացք տալ սերմացուի պահպանմանը՝ որպես գյուղատնտեսական կուլտուրաների ցանքային տարածությունների վերականգնման կարևոր պայմաններից մեկը։

1921 թվականի ապրիլի 10-ին, Հայաստանի Ռևկոմը, հիմնվելով պարտիայի 10-րդ համագումարում Լենինի արած ցուցումների վրա, դեկրետ ընդունեց սերմացուի մասին, որտեղ ասված էր.

«Հայաստանում ստեղծված ծանր տնտեսական ճգնաժամից ազատվել կարելի է միայն որքան հնարավոր է մեծ քանակությամբ ցանքս անելով։

Այդ նպատակով Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Հեղափոխական Կոմիտեն, պատրաստ լինելով ամեն տեսակ դյուրություն և աջակցություն ցույց տալ բոլոր երկրագործներին և երկրագործությամբ պարապել ցանկացողներին, առաջիկա ցանքերի գործն ապահովելու համար կայացրեց հետևյալ որոշումները.

1. Ցանելիք սերմացուն ազատ է որևէ բռնագրավումից։

2. Ցանքսերից ստացվելիք բերքը ամբողջովին պատկանում է ցանողին և նույնպես չի կարող ենթարկվել բռնագրավման։

3. Տեղական. բոլոր հեղկոմները պարտավոր են իրենց պատասխանատվությամբ հսկել այս դեկրետի անշեղ գործադրությանը»։[1]

Այս դեկրետի կիրառումը իսկոյն չափով նպաստեց գյուղացիության սեփական միջոցները արտադրության մեջ ներդնելու ու ցանքային տարածությունները ընդարձակելու գործին։ Այնուհետև անհրաժեշտ էր գյուղացիությանը տնտեսապես շահագրգռել, իրախուսել, որպեսզի նա արտադրության լայնացման հետ միաժամանակ ավելի շատ մթերքներ վաճառի։

Հետևաբար՝ անհրաժեշտ էր Սովետական Ռուսաստանի օրինակով վերացնել ներքին առևտրի, հատկապես գյուղատնտեսական մթերքների վաճառահանման պետական մենաշնորհը։

Անհրաժեշտ էր անմիջապես վերացնել պարենամատակարարման քաղաքականությունը, փոխարինել այն պարենհարկման քաղաքականությամբ, հավաստիացնել գյուղացիությանը, որ ինքն է տերը իր արտադրության ու նրա մթերքների իրացման։

Հայաստանի կոմունիստական պարտիան ու կառավարությունը՝ քայլ առ քայլ հետևելով Սովետական Ռուսաստանում կիրառվող նոր տնտեսական քաղաքականությանը, պարտիայի 10-րդ համագումարից հետո, հիմնվելով Լենինի տնտեսական նոր քաղաքականության մասին արած ցուցումների վրա, երկրի տնտեսական, հասարակական կյանքում նոր, վճռական շրջադարձ կատարեցին, որի մեջ լիովին արտահայտվեց լենինյան տնտեսական նոր քաղաքականության իմաստությունն ու հեռատեսությունը։

Հայաստանի Ռևկոմի առաջին քայլը, այդ ուղղությամբ, եղավ բոլոր տեսակի պարենների բռնագրավումների վերացման վերաբերյալ 1921 թ. ապրիլի 16-ի դեկրետի հրապարակումը, որտեղ ասված էր.

---

[1] Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 2, էջ 12, հրատ. 1921 թ. էջմիածին։

«Այսօրվանից վերացվում են ամեն տեսակի պարենների գրավումը, նույնպես և վերացվում են կայուն գները շուկայում»։[1]

Միաժամանակ Ռեկոմը ընդունեց մի այլ որոշում՝ պարենմասնատրման կարգով գյուղացիությունից վերցված մթերքների՝ հացահատիկի, անասնակերի, անասունների արժեքը վճարելու մասին.

«Աշխատավոր դասակարգի քայքայված տնտեսությունը վերականգնելու նպատակով ՀՍԽՀ Ռազմա-հեղափոխական Կոմիտեն որոշեց՝

1. Վճարել Հայաստանի աշխատավոր գյուղացիներին ու քաղաքացիներին կարմիր Բանակի կարիքների համար բռնագրավված հացահատիկների, անասնակերի ու տավարի արժեքը»։[2]

Այնուհետև Հայաստանի ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը 1921 թ. հունիսի 24-ին դեկրետ հրապարակեց պարենհարկի մասին և վերացրեց բոլոր սահմանափակումները, որոնք խոչընդոտ էին հանդիսանում գյուղացիական տնտեսությունների լայնացմանը։

Պարենհարկի մասին հրապարակված դեկրետում ասված էր.

«Պարենի, հում նյութերի և ֆուրաժի այն բոլոր պաշարները, որոնք հարկը վճարելուց հետո մնում է հողագործի մոտ, գտնվում է նրա լիակատար տրամադրության տակ և չի կարող ենթարկվել ոչ ոքի կողմից բռնագրավման և կոնֆիսկացիայի»։

Սովետական իշխանության այս միջոցառումները էլ ավելի ամրապնդեցին պրոլետարիատի՝ ու աշխատավոր գյուղացիության ռազմաքաղաքական դաշինքը։

Այս դեկրետը արմատական բեկում մտցրեց գյուղատնտեսության արտադրության կազմակերպման մեջ, իրապես բարձրացրեց գյուղացիության շահագրգռվածությունը շատ արտադրելու, շուտ վաճառելու համար։ Պարենհարկման քաղաքականության անցնելով՝ պետությունը նպաստեց իմպերիալիստական ու ազգամիջյան կռիվների ընթացքում աղքատացած գյուղացիության նյութական արտադրական կացության արագ բարելավման գործին։

Այդ նկատառումով պարենհարկման դրույքները դասակարգային շերտավորման ենթարկվեցին, այն հաշվով, որ մի կողմից հարկադրման հիմնական ծանրությունը կրեն գյուղի հարուստ-կապիտալիստական էլեմենտները, իսկ մյուս կողմից հնարավոր լինի չքավոր տնտեսությունները բարձրացնել, տնտեսապես ամրապնդել։

Անցնելով նոր տնտեսական քաղաքականության, պարտիան իր առաջ դրել էր առաջնահերթ ու անհետաձգելի խնդիր՝ բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքի ամրապնդման միջոցով, պրոլետարիատի դիկտատուրայի հաղթահարել կապիտալիստական էլեմենտների դիմադրությունը, լիովին վերականգնել ժողովրդական տնտեսությունը, այն սոցիալիստական ինդուստրացման ենթարկել և հող պատրաստել գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար, միաժամանակ լիովին

[1] Դեկրետների ու հրամանների ժողովածու, պրակ 2, էջ 17, հրատ. 1921 թ., էջմիածին

[2] «Կոմունիստ» թերթի № 64, 13 ապրիլի 1921 թ.։

[3] Դեկրետների ու հրամանների ժողովածու, պրակ 1, հրատ. 1921 թ., էջմիածին։

լիկվիդացնել կապիտալիզմի վերջին մնացորդները թե քաղաքում և թե գյուղում։

Շնորհիվ երկրում ստեղծված սոցիալ-տնտեսական ու դասակարգային նոր հարաբերությունների ու պետության կողմից չքավոր և ապա միջակ գյուղացիությանը ցույց արվող նյութական-ֆինանսական ու կազմակերպչական սիստեմատիկ օգնությանը, գյուղատնտեսությունը թեև դժվարությամբ, բայց մի քանի տարիների ընթացքում իր հիմնական ցուցանիշներով համարյա հասավ նախապատերազմյան մակարդակին, իսկ բերքատվությամբ ու համախառն արտադրանքով նույն ժամանակամիջոցում անցավ նախապատերազմյան մակարդակից։

Այս բոլորի հետեանքով, սկսած 1921 թ. ապրիլ—մայիս ամիսներից, տնտեսական անկումը երկրում հիմնականում դադարում է և սկսում է վերակենդանանալ անտեսական կյանքը. այդ առաջին հերթին նկատվում է գյուղատնտեսության մեջ և դրանով էլ սկսում է վերականգնման պրոցեսի սկիզբը։

Գյուղատնտեսության առանձին ճյուղերի վերականգնման պրոցեսը հետևյալ պատկերն է ներկայացնում.

Ցանքատարածությունները (հազար հեկտարներով)

Կուլտուրաներ	1913	1919	1922	1924	1926	1928
Ընդամենը ցանքային տարածություն. . . .	345.7	82.7	83.2	248.7	302.4	334.8
Այդ թվում հացաբույսեր	308.5	78 4	79.3	213.2	267.1	295 6
տեխն. կուլտ. . .	20.5	1.6	2.8	22 2	16.5	18.7
որից բամբակ . .	15.3	0.6	4.0	15.0	11.7	13.3
այգիներ . . .	13.6	6.6	—	9.5	10 5	13.3
որից խաղողանոց .	9.2	5.1	—	7.5	8.2	8.8

Ինչպես տեսնում ենք, ցանքային տարածությունների վերականգնումը մեզ մոտ Հայաստանում մինչև 1926 թվականի վերջերը դեռևս լիովին չէր ավարտված, այն հնարավոր եղավ հասցնել նախապատերազմյան մակարդակի 87,47 տոկոսին միայն, այնինչ այդ նույն ժամանակաշրջանում, 1925—1926 թվականներին, Սովետական Միության մյուս ռեսպուբլիկաներում, հատկապես Ռուսաստանում, ավարտվում է գյուղատնտեսության բոլոր ճյուղերի (բացառությամբ անասնապահության մեջ ձիերի գլխաքանակի) վերականգնումը։

Ինչով բացատրել այն հանգամանքը, որ մեզ մոտ Հայաստանում գյուղատնտեսության վերականգնման պրոցեսը ավարտվեց 3—4 տարի ուշ, քան Սովետական Միության մյուս ռեսպուբլիկաներում։

Ոմանք այդ բացատրում են աճման, ավելի ճիշտ, վերականգնման տեմպերի թուլությամբ, այդ ճիշտ չէ, որովհետև երբ վերլուծման ենք ենթարկում աճման պրոցեսը, տեսնում ենք, որ, ընդհակառակը, այդ տարի-

ներին մեզ մոտ աճման տեմպերը ավելի բարձր են եղել, քան Սովետական Միությանն մյուս ռեսպուբլիկաներում։

Այսպես օրինակ՝ 1924 թվականին Սովետական Հայաստանում ցանքային տարածությունները 1922 թվի 82,2 հազար հեկտարի համեմատությամբ ավելացել է մինչև 248.7 հազար հեկտարի չափով, որը 1919 թվականի համեմատությամբ կազմում է 301 տոկոս, իսկ 1922 թվականի համեմատությամբ 202,5 տոկոս, տնտեսության վերականգնման այսպիսի տեմպ Սովետական Միության մեջ չի ունեցել և ոչ մի ռեսպուբլիկա։

Եղել է նաև այն կարծիքը, թե մեզ մոտ թույլ են գործել և նույնիսկ շատ դեպքերում կաչկանդվել են տնտեսական այն լծակները, որոնք պետք է շահագրգռեին ու ավելի արագ տեմպով առաջ մղեին վերականգնման պրոցեսը։

Այդ ուղղած էր Սովետական իշխանության հարկային քաղաքականության, գյուղի չքավորական տնտեսությունների վարկավորման, վարձու աշխատանքի ու հողի արենդի սահմանափակման քաղաքականության դեմ։

Տրոցկիստ Սաֆրասբեկյանը և մյուսները գտնում էին, որ սովետական պետության այդ քաղաքականության «ճշտումը» կարագացնի գյուղատնտեսության վերականգնման պրոցեսը։

Ինալ գյուղատնտեսության հարկման շերտավորված սիստեմի վերացման, աշխատանքի, հողի արենդի սահմանափակումների վերացման ուղիով, այդ նշանակում էր գյուղը տանել զարգացման կապիտալիստական ուղիով, տեղի տալ գյուղի կապիտալիստական դասակարգային շերտավորման հոգուտ նրա կուլակացման։

Վերջին հաշվով այդ կնշանակեր հրաժարվել գյուղի սոցիալիստական կերպարանափոխման լենինյան-ստալինյան պլանից, խզել դաշինքը գյուղացիության հետ, վտանգել սոցիալիստական ռևոլուցիայի նվաճումների ամրապնդումն ու սոցիալիզմի հաղթանակը գյուղում։ Այդ իր ամբողջ էությամբ մեր երկրում կապիտալիզմի restավրացիայի քաղաքականությունն էր։

Գյուղատնտեսության վերականգնման վերջին տարիների աճման տեմպերի վրա բացասաբար անդրադարձավ Հայաստանի Պետպլանում տեղ գտած ֆնասարարական այն տեսակետը, ըստ որի սովետական տնտեսության մեջ գնալով աստիճանաբար սպառվում են աճման աղբյուրները, ռեզերվները և, հետևաբար, անկախ մեզանից որքան առաջ գնանք, այնքան կթուլանա տնտեսական զարգացման տեմպը, մի խոսքով աճման պրոցեսը ընթանալու է մարող կոր գծով։

Այդ մասին Հայաստանի Պետպլանի 1924/25—1925/26 թվականների կոնյունկտուրային տեսության մեջ կարդում ենք.

«Մշակման տարածության ավելացման հետ միասին պակասում է վերականգնման պրոցեսի արագությունը։ 1924 թվականին աճել է 10 տոկոս, 1925 թվականին 8 տոկոս, 1926 թվականին 5 տոկոս, այդ դանդաղումը միանգամայն օրինաչափ է, որքան մենք առաջ ենք ընթանում, որքան մոտենում ենք նախապատերազմյան մակարդակին, այնքան սպառվում են աճման աղբյուրները»[1]

[1] Հայաստանի ՍՍՌ ժողովրդական տնտեսությունը 1924/25—1925/26 թ. թ., էջ 8, հրատ. 1927 թ., Երևան։

Հետևությունը պարզ է, որ վերականգնման պրոցեսը ավարտելուց հետո ժողովրդական տնտեսության հետագա աճը դադարելու է, որովհետև սպառվում են աճման աղբյուրները, ռեզերվները։

Այստեղ հաշվի չեն առնվում պրոլետարական դիկտատուրայի պայմաններում զարգացող տնտեսության առանձնահատկությունները ու առավելությունները, և երկրորդ՝ հաշվի չեն առնվում օրեցօր աճող սոցիալիստական ինդուստրիայի ազդեցությունը, պետական կազմակերպված նյութական օգնությունը գյուղացիության, ու գյուղատնտեսության սովետական զարգացման առանձնահատկությունները, որոնք պայմաններ են ստեղծում ընդլայնված վերարտադրության համար և ապա վերածվում լիակատար ընդլայնված սոցիալիստական վերարտադրության։ Այս բոլորը պարզին հաշվով ոչ թե սպառում են աճման հնարավորություններն ու աղբյուրները, այլ, ընդհակառակը, ավելացնում են այն։

Վերականգնման շրջանում հացահատիկային կուլտուրաների ցանքային տարածությունների վերականգնման հետ միասին հատուկ ուշադրություն դարձվեց ցանքային տարածությունների ստրուկտուրայի փոփոխման վրա, այն ավելի ինտենսիվ ու տեխնիկական արժեքավոր կուլտուրաներով հարստացնելու համար։

Հիմնականում հաղթահարելով վերականգնման շրջանի սոցիալ-տնտեսական դժվարությունները, սկսած 1923—1924 թվականներից, ինչպես ամբողջ ժողովրդական տնտեսության, առավել ևս գյուղատնտեսության վերականգնման արագ վերելքի համար ստեղծվում են հավարյա թե նորմալ պայմաններ։

Հացաբույսերի տարածությունը 1926 թվականին 1913—1914 թ. թ. համեմատությամբ 87,47 տոկոս էր կազմում, որի հետևանքով բնակչության 100 շնչի նկատմամբ 1926 թվականին ավելի ցանքատարածություն էր հասնում, քան 1913 և 1919 թ. թ.։ Այսպես, օրինակ, 1913 թվականին 100 շնչին հասնում էր 30.2 հեկտար հացաբույսերի տարածություն, 1919 թվականին այն իջել էր մինչև 10.3 հեկտարի, իսկ 1926 թվականին բարձրացավ մինչև 30.33 հեկտարի.[1] այդպիսով 1926 թվականին միայն բացարձակ տարածության աճը 0.13 տոկոսով գերազանցում է նախապատերազմյան վիճակից։

Մեր բերած թվերը վերաբերում են ամբողջ երկրին։ Առանձին շրջանների աճը ավելի ցայտուն կերպով ցույց է տալիս վերականգնման ընթացքը ու նրա տեմպերի անարգել աճը։

Մի շարք շրջաններում 1926 թվականին աճը անցել էր նախապատերազմյան մակարդակը, Երևանի գավառում՝ 8 տոկոսով, Դիլիջանի գավառում՝ 12 տոկոսով, Զանգեզուրի գավառում 19 տոկոսով և այլն։

Ցանքային տարածությունների վերականգնումով զգալի չափերով պակասում է ցանք չունեցող գյուղացիների թիվը։

Այդ ցույց տալու համար բերենք Հայկենտվիճարի կողմից պարբերաբար կատարված ընտրովի ուսումնասիրությունների նյութերը, որոնք

[1] Հայկական ՍՍՌ Երևանի կենտրոնական Արխիվ, ֆոնդ 163, գործ 17, թերթ 15։

ցույց են տալիս գյուղի աղքատության վերացման ու տնտեսական ամրապնդման ընթացքը (բերված են տոկոսներով)։

Ցանքատիրապետման խմբերը	1922 թ.[1]	1923 թ.[2]	1925 թ.[3]	1929 թ.[4]
1. Ցանք չունեցող տընտեսություններ	32.90	18.01	15.26	10.77
2. 0. 1-ից մինչև 1 հեկտար ունեցող	52.16	50.34	39.21	33.84
3. 1. 1-ից մինչև 2 հեկտար ունեցող	7.70	18.77	24.83	27.64
4. 2. 1-ից մինչև 4 հեկտար ունեցող	5.88	9.65	16.26	21.27
5. 4. 1-ից մինչև 6 հեկտար ունեցող	0.94	2.19	3.10	4.66
6. 6. 1-ից ավելի հեկտ. ունեցող	0.42	1.03	1.34	1.83

Բերված թվերից երևում է, որ ցանք չունեցող տնտեսությունների թիվը 7—8 տարվա ընթացքում զգալի չափով պակասել է, 32.9 տոկոսից իջել է մինչև 10.77 տոկոսի, այնուհետև 1922 թվին մեր գյուղացիության կեսից ավելին մինչև մեկ հեկտար ցանք ուներ, որը խիստ անբավարար էր, թեկուզ նրա տնտեսության սպառողական մինիմալ պահանջների տեսակետից։ Այդպիսի տնտեսությունների թվի կիսով չափ պակասելը նույնպես սովետական գյուղի սոցիալ-տնտեսական վիճակի արմատական փոփոխման, նրա նյութական ամրապնդման արդյունք է։ Եվ վերջապես, եթե 1922 թվականին 2—4 հեկտար ցանք ունեցող տնտեսությունները կազմում էին գյուղացիական տնտեսությունների 13.23 տոկոսը, ապա 1929 թվականին այն հասնում է մինչև 48.91 տոկոսի։

Անհրաժեշտ է նկատել նաև այն, որ 1922 թվականին ցանք չունեցող գյուղացին իր սոցիալ-տնտեսական էությամբ բոլորովին նման չէ 1929 թ. ցանք չկատարող գյուղացուն. առաջին դեպքում նա ցանք չուներ բանող անասուն, գյուղատնտեսական ինվենտար, սերմացու և մասամբ մշակության համար նպատակահարմար հող չունենալու պատճառով, այսպես օրինակ՝ 1922 թվականի գարնանը Հայկենտվբճվարի անկետային ուսումնասիրության նյութերից պարզվում է, որ Լենինականի գավառի Դյուզքենդի գավառամասում ցանք չունեցող 31 տնտեսություններից 27-ը «մինչև ցանքս չունենք» հարցին պատասխանել են, որովհետև լծկան, սերմացու ու ինվենտար չունենք, նույնպիսի պատասխան են տվել Մոլլա-Գյոկչա գավառամասի 30 տնտեսությունից 29-ը, Թալինի գավառամասի 28 տնտե-

[1] Հայկական ՍՍՌ Երևանի Պետական Արխիվ. ֆոնդ 163, գործ 2865, թերթ 2։
[2] Նույն տեղում, գործ 3368, թերթ 6։
[3] Նույն տեղում, գործ 17, թերթ 13։
[4] Նույն տեղում, գործ 4485, թերթ 1—49։

սությունից 16-ը, Հաջի-Հալիլ գավառամասի 21 տնտեսությունից 19-ը և այլն։[1]

Բոլորովին այլ պատճառներով է բացատրվում գյուղացիական տնտեսության ցանք չունենալը 1929 թվականին, այն մեծ մասամբ գյուղատնտեսության մյուս ճյուղերով՝ անասնապահությամբ, մեղվաբուծությամբ, շերամապահությամբ և կամ այլ աշխատանքով զբաղվելու պատճառով է։

1929 թվականին համարյա թե վերացել էին այն բոլոր սոցիալ-տընտեսական խոչընդոտները, որոնք աղքատ գյուղացուն արգելք էին հանդիսանում արտադրության միջոցներ, սերմացու, մթերատու ու քաշող անասուն ձեռք բերելու գործում։

Շնորհիվ բոլշևիկների պարտիայի լենինյան-ստալինյան ազգարային քաղաքականության հաղթանակի, սովետական իշխանության հոգատարության, աշխատավոր գյուղացու համար սեփական տնտեսություն ունենալը և այն կործանումից պահպանելը դարձավ ռեալ իրականություն։

Վերականգնման շրջանի տնտեսական քաղաքականության հիմնական խնդիրն էր բարձրացնել գյուղը նյութական-տեխնիկական անհրաժեշտ բարձրության վրա և հող ստեղծել նրա հետագա սոցիալիստական վերակառուցման համար։

Մինչև 1926 թվականի վերջերը գյուղատնտեսական շինարարության բնագավառում ուշադրության կենտրոնում էր գտնվում առաջին հերթին ցանքային տարածությունների բացարձակ վերականգնման խնդիրը, բայց գյուղատնտեսական կուլտուրաների, հատկապես հացահատիկային կուլտուրաների բերքատվությունը այնքան ցածր էր, որ չէր բավարարում երկրի աճող պահանջը։ Այստեղից էլ անհրաժեշտ էր դառնում ցանքային տարածությունների ավելացման հետ միասին ծավալուն պայքար մղել բերքատվության բարձրացման համար, վերացնել այս բնագավառում եղած հետամնացությունը։

Հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունների ավելացման հետ միաժամանակ արագ տեմպերով ավելանում է նրա բերքատվությունը. 1926—1928 թվերին հացահատիկային կուլտուրաների միջին բերքատվությունը մեկ հեկտարից միջին հաշվով հասնում է 8,7 ցենտների, 1913 թվականին 5.8, 1919 թվականի 4.9,[2] և 1922 թվականի 7,1 ցենտների դիմաց, որի հետևանքով 1926 27 թվականներին հացի հավաքառն արտադրանքը անցավ նախապատերազմյան մակարդակը։

Հացամթերքների արտադրությունը ըստ վերականգնման տարիների հետևյալ պատկերն ունի (տես էջ 12)։

Ինչպես տեսնում ենք, 1926 թվականին ցանքային տարածությունների քանակով դեռևս մենք չէինք հասել նախապատերազմյան (1913) մակարդակին, բայց շնորհիվ ագրոտեխնիկական միջոցառումների ու տնտեսության կազմակերպմանը, գլխավորապես ոռոգման աշխատանքների ծավալմանը, հնարավոր եղավ մոտ երկու անգամ ավելացնել յուրաքանչյուր հեկտարի բերքատվությունը և 43.8 տոկոսի չափով ավելացնել հացի հավաքառն արտադրանքը նախապատերազմյանի համեմատությամբ։

---

[1] Հայկական ՍՍՌ Երևանի Պետական Արխիվ, ֆոնդ 163, գործ 4, թերթ 1—5։
Социалистическое строительство Армянской ССР, стр. 67, изд. 1940 г., Ереван

Ռեսպուբլիկայի ներսում հացի արտադրության ավելացումը և Սովետական Ռուսաստանից ներմուծվող հացի պաշարը արմատապես բարելավում են թե գյուղի և թե քաղաքի հացի մատակարարումը և հնարավորություն են տալիս ինչպես տեխնիկական կուլտուրաների, այնպես էլ այգեղործական և անասնապահության լայն զարգացմանը։

Տարիներ	Հացահատիկով զբաղված տարածությունը (հազ. հ.)	Բերքը մեկ հեկտարից (ցենտ.)	Հացահատիկի համախառն արտադրանքը (ցենտ.)
1913	308.5	5.8	1.789.300
1919	78.4	4.9	384.100
1922	79.3	7.1	363.030
1924	215.2	7.6	1.620.320
1926	267.1	9.6	2.564.160

Գյուղատնտեսության վերականգնման պրոցեսը ավելի արագ է ընթանում տեխնիկական կուլտուրաների՝ թե ցանքի տարածության և թե բերքատվության բարձրացման ընդհանրությամբ։

Այս բոլորը արդյունք էր երկրի սոցիալիստական ինդուստրացման ու նրա հումքի պահանջի, որի հետևանքով անհրաժեշտ է դառնում գյուղատնտեսության ինտենսիվացումը։ Ցանքային տարածությունների վերականգնումը չէր ընթանում լոկ իր նախկին՝ վերականգնելու ուղիով, այլ կուրս էր վերցրել աստիճանաբար փոխել նրա ստրուկտուրան դեպի ժողովրդատնտեսական ավելի մեծ արժեք ներկայացնող կուլտուրաները։

1924 թվականին ավարտվում է տեխնիկական կուլտուրաների թե ցանքի տարածության և թե բերքատվության նախապատերազմյան մակարդակի վերականգնման աշխատանքները։ 1913 թվականին 20.5 հազար և 1919 թվականի 1.6 հազար հեկտար տեխնիկական կուլտուրաների տարածությունը 1924 թվականին հասնում է 22.3 հազար հեկտարի։

Հետագայում, սկսած 1926 թվականի սկզբներից, տեխնիկական կուլտուրաների, այդ թվում գլխավորապես բամբակի, ցանքային տարածությունները տարեբաղնորեն պակասում են՝ բամբակի տարածությունը 1924 թվականի 16 հազար հեկտարից իջնում է 11.7 հազար հեկտարի։

Այդ հետևանք էր 1926 թվականին հացի վաճառքի ու բամբակի մթերման գների միջև ստեղծված անորմալ հարաբերությանը, որը տարեբաղնորեն ստիպեց մանր գյուղացիական տնտեսություններին ի հաշիվ բամբակի ցանքատարածությունների կրճատման, ավելացնել հացահատիկային կուլտուրաների տարածությունները, ավելի շատ հաց արտադրելու, տնտեսությունը սեփական հացով ապահովելու համար։ Հետագայում այդ դրությունը կարգավորվեց բամբակի մթերման գների կայունացման հետևանքով։

Այգեղործությունը, հատկապես խաղողագործությունը, որը Հայաստանի գյուղատնտեսության հնագույն ու շահաբեր ճյուղերից մեկն էր, բաղ-

ժաթիվ անգամ ավերումների էր ենթարկվել։ Առաջին իմպերիալիստական պատերազմը և ապա երկու տարի անող (1918—1920) ազգամիջյան կռիվները հիմնովին քայքայել էին այգեգործությունը, որը կորցրել էր իր բարձր, դարերի ընթացքում ստեղծված որակական հատկանիշները, չտեսնված չափերով ընկել էր բերքատվությունը։

1917—1920 թ. թ. շատ տեղերում՝ Հոկտեմբերյանի, Վեղիի, Զանգիբասարի, Վաղարշապատի շրջաններում անխնա կերպով կտրատում էին պտղատու այգիները, նույնիսկ խաղողի վազերը որպես վառելափայտ օգտագործելու համար։

Խաղողի այգիների մի մասն էլ ոչնչացել էր ժամանակին չջրելու, չխնամելու պատճառով։ Սովետական Հայաստանի ներկա տերիտորիայում ընդամենը ոչնչացել էր մոտ 7000 հեկտար լրիվ բերքատու այգի, որից մոտ 4100 հեկտար՝ խաղողի այգի։

Սովետական իշխանությունը մեծ միջոցառումներ ձեռնարկեց և շահագրգռեց գյուղացիությանը՝ արագորեն վերականգնելու այգեգործությունը։ Այգիների ընդհանուր տարածությունը 1928 թվականին հասավ նախապատերազմյան մակարդակին—13.300 հեկտարի, որից 8500 հեկտարը խաղողի այգիներ, իսկ բերքատվությունը հավասարվել էր նախապատերազմյան մակարդակին, եթե վրա չհասներ 1925/26 թ. թ. բնական պետը՝ ցրտահարումը, որի հետևանքով ցրտահարվեց այգիների կգալի մասը և բերքատվությունը 2—3 տարով հետ գնաց։

Չնայած այն բանին, որ այգեգործության վերականգնման աշխատանքները ավելի դժվար էին, որովհետև դրանք կապված էին կապիտալ ներդրումների, կուլտուրայի աշխատաբարության, նյութա-տեխնիկական մի շարք պահանջների հետ, սակայն պետական միջոցառումների ու վարկավորման աշխատանքների ծավալման շնորհիվ հնարավոր եղավ համեմատաբար ավելի կարճ ժամանակամիջոցում վերականգնել ամբողջ կորուստը։

Այգեգործական շրջաններում կազմակերպված այգեգործական արտադրական վարկային ընկերությունները այդ գործում դրական մեծ դեր խաղացին։ Նրանք կոոպերատիվ ընկերությունների մեջ ընդգրկեցին այգեգործ գյուղացիների մեծ մասին, նյութական, տեխնիկական օգնություն կազմակերպեցին նրանց և արագացրին այգեգործության զարգացման աշխատանքները։

1923 թվականից մինչև 1928 թվականը շրջաններում կազմակերպված 13 վարկային այգեգործական ընկերությունները ընդգրկել էին երկրում եղած այգիների մոտ 25 տոկոսը, իսկ առանձին արդյունաբերական նշանակություն ունեցող այգեգործության շրջաններում մինչև 45—50 տոկոսը։

Հայաստանի գյուղատնտեսությունը իր համախառն արտադրանքով 1928 թվականին հիմնականում հասել և մի քանի մասերի գծով անցել էր նախապատերազմյան մակարդակը։ այդ ցույց է տալիս հաջորդ էջում բերված աղյուսակը։

Ռեսպուբլիկայի գյուղատնտեսության մեջ անասնապահությունը կարևորագույն ճյուղերից մեկն է։ 1909—1913 թվականներին անասնապահության արտադրանքը, հաշված դրամական արտահայտությամբ, գյուղատնտեսության համախառն արտադրանքի 34,3 տոկոսն էր կազմում։

Գյուղատնտեսության մեջ իմպերիալիստական ու ազգամիջյան կռիվ-

ներից ամենաշատ տուժած ճյուղերից մեկն էլ անասնապահությունն էր։ Ոչ միայն պակասել էր անասունների գլխաքանակը, այլև խիստ ընկել նրա որակական ցուցանիշները։

Կուլտուրաներ	Արտադրանքը տոննաներով				Նախապատերազմի նկատմամբ որ տոկոսն է կազմում
	1913	1924	1926	1928	
Ընդամենը հացահատիկ	178 930	162 032	256 416	277 864	155.3
Բամբակ	13.759	13.102	8211	11.620	84.4
Ծխախոտ	74	247	329	298	402.7
Ընդամ. բանջարաբոստանային կարտոֆիլ	121.212	27 747	119.348	171 733	141.7
Այգեգործության ընդհ. բերք	40.950	26.863	30.088	23.598	47 8
Խաղողագործ. ընդհ. բերք	79.443	35.381	32.970	71.562	90.0

Անասունների գլխաքանակը Հայաստանում մինչև առաջին իմպերիալիստական պատերազմը, գաշնակների տիրապետության ժամանակ և ապա սովետական իշխանության հաստատումից հետո տնտեսության վերականգնման շրջանում հետևյալ պատկերն ուներ.[1]

Սովետական Հայաստանի անասնապահությունը գյուղատնտեսության վերականգնման շրջանում (հազար գլուխներով)

	1913	1919	1922	1924	1926	1928
Ձի	54.4	19.8	14.2	19.6	28.5	31.6
Ոչխար եղջերավոր անասուն	893.9	294.3	334 2	632.6	781.1	898 0
Որից՝ կով	295.3	109 3	99.8	116.7	217.2	299.9
Լծկան	274.3	84.0	98.6	145.1	173.7	270.4
Մանր եղջերավոր անասուն	1564 6	470.9	421.1	792.5	1385.6	1776 9
Խոզ	23.6	5.6	8.6	9 1	33.1	41.6

Ինչպես ցույց են տալիս թվերը, ամենից շատ փոսավել էր ձիաբուծությունը. 1913 թվականի 54,4 հազար ձիու գիմաց 1919 թվականին մնացել էր 19,8 հազար գլուխ, իսկ 1922 թ. 14,2 հազար գլուխ։ Ձիերի գլխա-

1 Նյութերը վերցված են «Սոցիալիստական շինարարությունը Հայաստանում» գրքի 79 էջից. ինչպես Զ. Գրիգորյանի «Սովետական Հայաստանի 25 տարին» և Հայկենտվիճակագրի 1925 թ. հրատարակված «Վիճակագրական տեղեկատու» գրքերից։

քանակի այս անկումը հետևանք էր շարունակվող պատերազմների առթիվ բազմաթիվ անգամ տեղի ունեցող բռնագրավումների ու մասամբ էլ անկումների։

Խոշոր եղջերավոր անասնապահության անկումը մեծ ազդակ հասցրեց Հայաստանի գյուղատնտեսությանը որպես նրան քաշող ուժ մատակարարողի։

1913 թվականի 893,9 հազար գլուխ խոշոր եղջերավոր անասունի փոխարեն 1919 թվականին ընդամենը մնացել էր մոտ 294,3 հազար գլուխ անասուն, կամ նախկինի 33,0 տոկոսի չափով։

Հոտի կառուցվածքը վերլուծելիս անասնապահության վիճակը ավելի մռայլ է դառնում, որովհետև գլխաքանակի կրճատումը ավելի շատ կատարվել էր ի հաշիվ լծկանի ու կթան անասունի։ Կովերի գլխաքանակը կազմում էր նախապատերազմյան քանակի 37,0 տոկոսը, լծկանինը՝ 30,6 տոկոսը։

Այս բոլորի հետևանքով գյուղացիության անասնազրկությունը սարսափելի կայուն մեծ չափերի էր հասնում։

Գյուղացիական տնտեսությունների լծկան անասունով ապահովվածության վիճակը ճիշտ պատկերացնելու և անասնապահության վերականգնման ընթացքի մասին լրիվ պատկերացում ունենալու համար բերում ենք հետևյալ աղյուսակը.

Սովետական հայաստանի գյուղացիության կենդանի քաշող ուժով ապահովվածությունը 1922—1929 թվականներին (տոկոս.)

	1922	1924	1926	1929
Բանող անասուն բոլորովին չունեցող անտեսություններ	65.97	54.96	51.44	35.55
Մեկ գլուխ անասուն ունեցող տնտեսություններ	25.95	32.45	33 92	10.22
Երկու գլուխ անասուն ունեցող տնտեսություններ	5.82	8.50	9.72	28.99
Երեք գլուխ անասուն ունեցող տնտեսություններ	1.52	2.37	3.30	9.35
Չորս գլուխ անասուն ունեցող տնտեսություններ	0.74	1.32	1.62	7.63
Հինգ գլուխ անասուն ունեցող տնտեսություններ	—	—	—	3.0
Վեց և ավելի գլուխ անասուն ունեցող տնտեսություններ	—	—	—	4 86
	100.0	100.0	100.0	100.0

Այս տվյալները ցույց են տալիս, որ 1922 թվականին Հայաստանի գյուղացիության 65.97 տոկոսը զուրկ էր բանող անասունից, 25.95 տոկոսը ուներ մեկական բանող անասուն, կամ ամբողջ երկրը գյուղացիական անտեսությունների 91.92 տոկոսը զուրկ էր ինքնուրույն կերպով տնտեսություն վարելու հնարավորություններից սեփական քաշող ուժ չունենալու պատճառով։

Այս միաժամանակ ցույց է տալիս հայկական գյուղի սոցիալ-տնտեսական պատկերը, այն իմաստով, թե ինչ ծանր ժառանգություն ստացավ սովետական իշխանությունը Հայաստանում նախկին «կալատարողներից»։

Սովետական իշխանության առաջին խնդիրն էր կարճ ժամանակամիջոցում վերականգնել ու զարգացնել անասնագրկությունը։ Կորուստն ու ազքատացումը այնքան ուժեղ էր, որ 1922 թվականից մինչև 1929 թվականը միայն հաջողվեց, և այն էլ մեծ դժվարությամբ, բանող անասուն չունեցող գյուղացիական տնտեսությունների քանակը 65.97 տոկոսից իջեցնել մինչև 35.55 տոկոսի, իսկ մեկ գլուխ անասուն ունեցողների տոկոսը 25.95-ից իջնում է մինչև 10.22-ի, երկու և ավելի բանող անասուն ունեցող տնտեսությունների քանակը՝ 8.10 տոկոսից ավելացնել մինչև 54.23 տոկոսի։

Այս տնտեսական մի այնպիսի խոշոր նվաճում էր գյուղացիության համար, որը նա կարող էր ձեռք բերել միայն սովետական իշխանության նյութական ու կազմակերպական անմիջական օգնության պայմաններում։

Գյուղատնտեսության քաշող ուժի արագ ավելացումը արագացնում է դաշտավարության թե տարածության և թե բերքատվության վերականգնման պրոցեսը, որովհետև Հայաստանում հող, ինչպես անցյալում, այնպես էլ մինչև 1930—1932 թվականները եղել է գյուղատնտեսական աշխատանքների ու տրանսպորտի հիմնական միջոց։

Բերքի նույնանման դրություն գոյություն ուներ կովապահովածության բնագավառում, որի մասին որոշակի գաղափար կտա մեր կազմած 17 էջի աղյուսակը[1]։

Բերված թվերը ցույց են տալիս, որ եթե 1922 թվականին գյուղացիական տնտեսությունների կեսից ավելին կովազուրկ էր, ապա սովետական իշխանությունը հաջողվեց համեմատաբար շատ կարճ ժամանակի ընթացքում այն պակասեցնել կիսով չափ։ Եթե 1922 թվականին Հայաստանում կով չունեցող գյուղացիների քանակը հասնում էր 55.89 տոկոսի, ապա այն 1929 թվականին իջավ մինչև 28.59 տոկոսի։ Մեկ և ավելի կով ունեցող տնտեսությունների տոկոսը համարյա թե կրկնապատկվեց, 41.11 տոկոսից բարձրանալով մինչև 71.11 տոկոսի չափով։

Ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանում անասնապահության գլխաքանակը աճեց այնպիսի արագությամբ, որպիսին Հայաստանի գյուղացիությունը երբեք չէր տեսել, հատկապես վերջին 30—40 տարիների ընթացքում։

---

1 Հայկական ՍՍՌ Սրեանի Պետական Արխիվ, ֆոնդ 163, գործ 17, թերթ 49, գործ 4485, թերթ 1—40։

Սովետական Հայաստանի գյուղացիության կոմատնտեսությունը 1922—1929 թվականներին (տոկոսներով)

	1922	1924	1929
Կով չունեցող տնտեսություններ	55.89	43.80	[illegible]
Մեկ կով ունեցող տնտեսություններ	24.30	26.50	32.16
Երկու կով ունեցող տնտեսություններ	11.30	16.10	22.63
Երեք կով ունեցող տնտեսություններ	4.64	6.80	9.31
Չորս կով ունեցող տնտեսություններ	3.87	6.80	3.30
Հինգ և ավելի կով ունեցող տնտեսություններ	—	—	3.41
	100.0	100.0	100.0

Այդ դրությունը ցուցադրվում է հետևյալ տվյալներով

	Մինչին տարեկան միջը տոկոսներով	
	1886—1913 թ. թ.	1919—1928 թ.թ.
1. Աղքատ գյուղերում տնտեսությունների	0.7	20.5
Այդ թվում կովերի	—	17.5
Այդ թվում եղների	—	22.1
2. Միջակ գյուղերում տնտեսությունների	0.6	27.7
3. Հարուստ	1.0	6.0

Գյուղացիական տնտեսությունների ճնշող մեծամասնությունը գրկվել էր նաև գյուղատնտեսական ինվենտարից։

Ռեսպուբլիկայում, 1923 թվականին, մոտ 140.000 գյուղացիական տնտեսություններից 91.237-ը[1] բոլորովին զուրկ էր գյուղատնտեսական ինվենտարից։ 1914 թվականի հետ համեմատած նվազել էր գութանների մոտ 50 տոկոսը, արորների մոտ 30 տոկոսը։

Առանձին շրջաններում գրությունն ավելի անժխիթարական էր։ Այս-

[1] Հայկական ՍՍՌ գեոգրաֆ. Արխիվ, ֆոնդ 49, գործ 36, թերթ 133։

պես, օրինակ՝ Երևանի գավառը 1922 թվականին 1914 թվականի համեմատությամբ կորցրել էր.[1]

Գութանների—65.9 տոկոսը
Արորների—69.1 »
Գերանդիների—84,4 »

Լենինականի գավառը նույն ժամանակում կորցրել էր.

Գութանների—92.2 տոկոսը
Արորների—76.8 »
Գերանդիների—96.6 »

Ղարաքիլիսայի գավառը կորցրել էր.

Գութանների—75.4 տոկոսը
Արորների—66.1 »
Գերանդիների—79.1 »

Հայկական գյուղի սոցիալ-տնտեսական պատկերը ավելի հասկանալի ու ճանաչելի դարձնելու համար մի քանի փաստ էլ բերենք այն մասին, թե հասարակական յուրաքանչյուր խումբ արտադրության միջոցներով ինչ աստիճանի էր ապահովված։

Այսպես, ըստ 1927 թվականի բնային ուսումնասիրության, Լենինականի (հացահատիկային), Ստեփանավանի (անասնապահական) և Ղազարլուի (այգե-խաղողագործական) շրջաններում մեկ տնտեսությանը միջին հաշվով հասնում էր արտադրության հետևյալ հիմնական միջոցները (ինվենտար, անասուն և բազմամյա տունկեր), հաշված 1926/27 թվականի անփոփոխ գներով[2].

	Հացահատիկային շրջաններում	Անասնապահական շրջաններում	Այգե-խաղողագործական շրջաններում
Ջքավորական տնտեսություններում	129.6	209.0	148.8
Միջակ տնտեսություններում	643 4	926.2	1393.1
Գուլակային տնտեսություններում	2047 0	2083.7	3125.1

Գյուղում եղած տնտեսական ու դասակարգային անհավասարությունը բացահայտ կերպով աչքի է ընկնում։

Այս թվերը ցույց են տալիս, որ, հնացած պետական մի շարք միջոցառումների, չքավորության վարկավորման, նրանց ցույց տված նյութական կազմակերպված օգնության և մյուս կողմից՝ կապիտալիստական էլեմենտների շահագործողական տենդենցների սահմանափակմանը, այնուամենայնիվ արտադրողական միջոցների տիրապետման բնագավառում սո-

[1] «Գյուղատնտեսական կյանք» ամսագիր, ՀՍԿ օրգան, 1924 թ., № 2—3, էջ 25։

[2] «Հայաստանի գյուղատնտեսությունը 1913/1930 թ.» ձեռագիր աշխատություն, Գիտությունների Ակադեմիայի Տնտեսագիտական սեկտորի արխիվում։

ցիալական խմբերի միջև տարբերությունը զգալի չափերի էր հասնում։ Հացահատիկային շրջաններում չքավոր գյուղացին միջակի համեմատությամբ ուներ 4,96 անգամ պակաս արտադրամիջոցներ, իսկ կուլակի համեմատությամբ՝ 17,86 անգամ պակաս, անասնապահական շրջանում այդ նույն կարգով կազմում է 4,43 անգամ, 8,1 անգամ, իսկ այգե-խաղողագործական շրջաններում՝ 9,36 և 21,0 անգամ։

Այդ երևույթը իր հերթին տեղի էր տալիս թե արտադրամիջոցների և թե հողի արենգին, վարձու աշխատանքին. դրա համար էլ ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանի գյուղի դասակարգային խմբերի սոցիալ-տնտեսական բնութագիրը լրիվ ըմբռնելու համար անհրաժեշտ է բերել տվյալներ հողի ու գյուղատնտեսական արտադրամիջոցների շուրջը ստեղծված առենդային հարաբերությունների մասին։

Այդ տեսակետից հետաքրքրական է Հայաստանի Վիճակագրական վարչության կողմից 1927 թվականին կատարված ընտրովի ուսումնասիրության նյութերի հիման վրա մշակված հետևյալ աղյուսակը.

	Վարձով հող են վերցրել		Իրենց հողը ավել են վարձով			
	Վարձով հող վերցրածների անասնաքանակը	Մեկ թաղանթ վարձավճարի նկատմամբ	Հողը վարձով տվողների անասնաքանակը	Մեկ թաղանթ արտադրանքի նկատմամբ	[illegible]	[illegible]
Չքավորներ	7,3	0,1	67.9	1.8	56 2	5.0
Միջակներ	47.9	1.5	27.9	2.0	74.8	48.8
Կուլակներ	75.9	4.7	6.9	2.4	43.1	70.7
	35.2	0.9	40.7	1.9	67.3	34.5

Այսպիսով, պարզվում է, որ չքավոր գյուղացիության 2/3 մասը քաշող ուժ, արտադրամիջոցներ ու սերմացու չունենալու պատճառով հիմնականում զրկված էր սեփական տնտեսություն վարելու հնարավորությունից, ուստի և ստիպված էր իր հողարաժինը արենդով տալ գլխավորապես կուլակային տնտեսություններին և մասամբ միջակ տնտեսություններին։ Այսպիսով, կուլակային տնտեսության համար հողի արենդը դարձել էր տնտեսական շահագործման հիմնական միջոցներից մեկը։

Մյուս կարևոր եզրակացությունն այն է, որ Հայաստանի գյուղացիության զգալի մասը, մոտ 67.3 տոկոսը, այդ թվում չքավորների ու միջակների 56.2--74.8 տոկոսը արտադրամիջոցներով ապահովված չլինելու պատճառով ստիպված էր օգտվել կուլակներից արենդով վերցվող արտադրամիջոցներից և հենց այդ պատճառով էլ կուլակությունը օգտվելով գյուղում ստեղծված տնտեսական այս դրությունից, բացի հողի արենդից, աշխատավոր գյուղացիության շահագործման հիմնական միջոց էր դարձրել նաև իր արտադրամիջոցները վարձակալությամբ տալը, որի հետևանքով նա ձգտում էր իր կապիտալն իրացնել մեծ մասամբ արտադրամիջոցների ձևով։

Աշխատավոր գյուղացիները կուլակներից վարձով արտադրության միջոցներ վերցնում էին գանազան պայմաններով՝ փողով, բնամթերքով, հողով և կամ աշխատանքով։ Վերջինս ավելի տարածված ձև էր։[1]

Այն հանգամանքը, որ կուլակային տնտեսությունների 43.1 տոկոսը արենդով արտադրության միջոցներ էր վերցնում, բոլորովին նման չէ չքավորական տնտեսությունների կողմից արտադրության միջոցների վարձակալմանը։ Դրանք իրար ուղղակի հակադիր երևույթներ են։ Չքավորի կողմից արտադրամիջոցների վարձակալումը հետևանք էր նրա տնտեսական անզորության, կարիքի, իսկ կուլակային տնտեսության կողմից արտադրության միջոցների վարձակալումը բխում էր վարձով վերցրած հողը մշակելու անհրաժեշտությունից, կուլակային տնտեսությունը ընդլայնելու, նրա ապրանքային ելքը ավելացնելու անհրաժեշտությունից։

Հայաստանի գյուղատնտեսության կարևորագույն հարցերից մեկն էլ ոռոգման հարցն է։

Հայաստանի պայմաններում, որտեղ մթնոլորտային տեղումները սակավ ու անհամաչափ են և արևից կիզվող մի քանի հարյուր հազար հեկտարից ավելի անջրդի հողային տարածություններ կան, ջրաշինարարական աշխատանքները՝ է՛լ ավելի մեծ նշանակություն են ստանում։

Երկիրը բնականից օժտված լինելով արտադրական վիթխարի հնարավորություններով, հատկապես տեխնիկական ու բազմամյա արժեքավոր կուլտուրաներ մշակելու համար, հողային ու ջրային հարստությունների ռացիոնալ օգտագործումը կբարձրացնի գյուղատնտեսության արտադրությունը և է՛լ ավելի կավելացնի ինչպես սպառողական մթերքների, այնպես էլ արդյունաբերական նշանակություն ունեցող հումքի արտադրությունը։

Հայաստանում 1914 թվականին ոռոգելի հողերի տարածությունը հաշվվում էր ընդամենը 97.000 հեկտար։ Առաջին իմպերիալիստական պատերազմի ու ազգամիջյան կռիվների հետևանքով ոռոգման սիստեմները մեծ մասամբ քայքայվեցին, որի հետևանքով 1919—1920 թ. թ. ոռոգելի տարածությունը Հայաստանում իջավ մինչև 60.000 հեկտարի չափով։

Հայաստանում սովետական իշխանության հաստատումից անմիջապես հետո խոշոր ջրաշինարարական աշխատանք ծավալվեց ինչպես կորուստը վերականգնելու համար, այնպես էլ նոր ջրանցքների կառուցման ուղղությամբ։

Ոռոգման խնդրի հետ էր կապված ոչ միայն ցանքային տարածությունների լայնացման ու բերքատվության բարձրացման հարցը, այլև իսկական ռացիոնալ գյուղատնտեսություն ստեղծելու հարցը։

Հայաստանի բոլշևիկները՝ ղեկավարվելով Լենինի ցուցմունքներով, ոռոգման մեծ աշխատանքի ձեռնարկեցին։

Գյուղատնտեսության վերականգման շրջանում, ոչ միայն վերականգնվեցին անցյալում գործող ամբողջ ջրաշինարարական սիստեմները, այլև կառուցվեցին և շահագործման հանձնվեցին ջրաշինարարական մի շարք սիստեմներ։

[1] Հայկական ՍԱՌ Երևանի Պետական Արխիվ, ֆոնդ 163, գործ 7, թերթ 29։

1. 1922–1923 թվերին կառուցվեց Էջմիածնի ջրանցքը, որի երկարությունն է 21 կիլոմետր, ոռոգման տարածությունը՝ մոտ 1000 հեկտար։

2. 1922—1925 թվերին կառուցվեց Շիրակի—Լենինի անվան ջրանցքը, որի երկարությունն է 30 կիլոմետր, ոռոգման տարածությունը՝ 12.750 հեկտար։

3. 1925 թվականին կառուցվեց Էվզիլարի ջրանցքը, որի երկարությունն է 14 կիլոմետր, ոռոգման տարածությունը՝ 1500 հեկտար։

4. 1923 թվականին ավարտվեցին Արազդայանի ջրանցքի վերականգնման աշխատանքները 1200 հեկտար ոռոգելու կարողությամբ։

5. Սկսվեց Փոքր Սարդարարատի ջրանցքի կառուցումը 23.000 հեկտար ոռոգման ծրագրով, 2.5 միլ. ռ. արժեքով։

6. Կառուցվեց Կարճեվանի ջրանցքը (Մեղրու շրջանում) 15 կիլոմետր երկարությամբ, 700 հեկտար ոռոգման կարողությամբ։

7. Ավարտվեց Էջմիածնի մոտ Այղր լճի էլեկտրական ջրհան սարքավորումը 12.500 հեկտար ոռոգման տարողությամբ։ Գլխավոր առվի երկարությունն էր 40 կիլոմետր։

8. Նախաձեռնվեց Ղամարլուի ճահիճների չորացումը—2700 հեկտար տարածության վրա, որից 1700 հեկտ. 1926 թվին արդեն յուրացված էր։

Բացի այս օբեկտներից, հետախուզական խոշոր աշխատանք ծավալվեց հյուսիս-արևմտյան և հարավ-արևմտյան գոտերը Զանգվի ջրով ոռոգելու ուղղությամբ, մոտ 30.000 հեկտարի օգտագործման հեռանկարով, Արազդայանի տափաստանում մոտ 15.000 հեկտար, Հոկտեմբերյանի տափաստանում 30.000 հեկտար և այլն։

Սովետական պետության այս միջոցառումների շնորհիվ արագորեն աճեց ջրովի հողերի տարածությունը 1913 թվականի 97.0 հազար և 1919 թվականի 60.0 հազար հեկտար տարածությունը 1923 թվին հասավ 110.0 հազար հեկտարի, իսկ 1932 թվականին՝ 119.2 հազար հեկտարի։ Հետագայում, Համկ(բ)Պ Կենտկոմի և Սովետական Միության կառավարության որոշումների, հատկապես 1940 թ. սեպտեմբերի 7-ի «Հայաստանում տեխնիկական կուլտուրաների, այգեգործության ու խաղողագործության զարգացման միջոցառումների մասին» որոշման կենսագործման շնորհիվ ջրովի հողերի տարածությունը ընդարձակվեց և 1937 թվին հասավ 160.6 հազար հեկտարի, 1940 թվին՝ 180.1 հազար հեկտարի, իսկ 1945 թվականին՝ 198.5 հազար հեկտարի։

Ոռոգելի հողերի ավելացման ու եղած ոռոգման սիստեմների բարելավման, արտադրողականության ավելացման համար 25 տարվա ընթացքում ռեսպուբլիկայում ծախսվել է մոտ 237.2 միլիոն ռուբլի, որից մինչև առաջին հնգամյակը՝ 4.0 միլիոն ռուբլի, առաջին հնգամյակի ընթացքում՝ 36.5 միլիոն ռուբլի, երկրորդ հնգամյակի ընթացքում 60.7 միլիոն ռուբլի, երրորդ հնգամյակի ընթացքում՝ 81.5 միլիոն ռուբլի, իսկ 1943—1945 թվականի ընթացքում 43.9 միլիոն ռուբլի։

Ջրաշինարարական աշխատանքների ծավալումը Հայաստանի գյուղատնտեսության զարգացման գործում հսկայական դեր խաղաց, այն հնարավորություն տվեց ավելացնել տեխնիկական կուլտուրաների, պտղաբուծության, խաղողագործության տարածությունները, մշակել նոր տեխնիկական կուլտուրաներ՝ ծխախոտ, շաքարի ճակնդեղ և այլն, ավելացնելով

գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը, լայնացնել ու ամրապնդել անասնապահության կերի բազան։

Ջրովի հողերի տարածությունը և նրանց օգտագործումը (հազար հեկտարներով)

Տարիներ	Ջրովի հողերի տարածությունը	Որից օգտագործվում է	
		տեխնիկական կուլտուրաների համար	պտղաբուծության ու խաղողագործության համար
1913	97,0	18,0	15,5
1919	60,4	0,7	7,6
1928	110,6	15,6	16,0
1932	119,2	21,2	16,4
1937	160,6	23,1	24,8
1940	180,1	25,2	30,3
1945	198,5	25,7	38,8

Տեխնիկական կուլտուրաների և այգեպտղաբուծության տարածության կրկնակի ավելացումը ցույց է տալիս, որ ջրաշինարարական աշխատանքների ծավալումը հնարավորություն տվեց արագացնել գյուղատնտեսության զարգացման պրոցեսը, ավելացնել նրա համախառն ու ապրանքային արտադրանքը և ընդհանրապես բարելավել գյուղացիության նյութական վիճակը։

Սովետական գյուղացիության սոցիալ-տնտեսական կյանքը բարելավելու գործում մեծ աղդեցություն ունեցավ հարկային քաղաքականությունը։

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս հարկային քաղաքականության նպաստավոր կողմը գյուղացիական տնտեսությունների տնտեսական կյանքը ամրապնդելու գործում։

	1912	1925	1925 թվ. տոկոսներով 1912 թվ. նկատմամբ
Մեկ շնչին հասնող հարկը[1] (ռուբլիներով) . . .	1,76	0,52	30,0
Գյուղատնտեսական արտադրանքի նկատմամբ տոկոսը . . .	5,23	2,18	41,7
Մեկ հեկտար հողի նկատմամբ հարկ տրվում էր (ռուբլիներով) . . .	3,83	0,76	23,0

1 Տվյալները վերցված են «Սովետական Հայաստանը հինգ տարում» հրեշյանական հրատարակությունից։ Հրատ. 1926 թ., Երևան։

Կոմունիստական պարտիայի ու սովետական կառավարության միջոցառումները արմատապես փոխեցին գյուղի ինչպես տնտեսական պատկերը, այնպես էլ նրա դասակարգային կառուցվածքը։

Հայաստանում մինչև առաջին իմպերիալիստական պատերազմը գյուղական տնտեսությունների 0.30 տոկոսը կալվածատերերը էին, 15.00 տոկոսը՝ կուլակներ, 17.00 տոկոսը՝ միջակներ և 67.50 տոկոսը՝ չքավորներ։

Չքավորների թվի խիստ պակասումը, միջակների ավելացումն ու կուլակային տարրերի՝ սկզբներում սահմանափակումն ու արտամղումն ե ապա նրանց ստիճանական լիկվիդացումը ցույց է տալիս գյուղում կատարված այդ մեծ փոփոխությունը։

Այսպես, օրինակ՝ 1922 թվից մինչև 1925 թվականը ցանք չունեցող գյուղացիների տոկոսը 32.90-ից իջնում է 15.26-ի, իսկ 1929 թվականին՝ 10.77 տոկոսի, կով չունեցող գյուղացիների տոկոսը 1922 թվի 55.89-ից 1929 թվականին իջնում է մինչև 28.59 տոկոսի. կամ՝ բանող անասուն չունեցող գյուղացիների տոկոսը 1922 թվականի 69.97-ից 1929 թվականին իջնում է 35.55-ի։

Եթե Սովետական Հայաստանի գյուղի սոցիալ-դասակարգային կազմը ընդհանուր գծերով համեմատենք նախառևոլուցիոն Հայաստանի գյուղի դասակարգային կազմի հետ, այդ փոփոխման պատկերը ավելի պարզ ու հասկանալի կլինի։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման շնորհիվ ամբողջապես լիկվիդացվեց կալվածատերերի դասը, 1926—1927 թվականների կուլակության տեսակարար կշիռը 1913 թվականի համեմատությամբ իջավ մինչև 5.85 տոկոսի չափով։ Միջակ ու չքավոր տնտեսությունները միասին վերցրած կազմում են գյուղացիական տնտեսությունների 91.15 տոկոսը (միասին է տրվում, որովհետև չկա նրանց առանձնացված տվյալները)։ Գյուղական պրոլետարիատը կազմում է տնտեսությունների 2.9 տոկոսը և սկսում է առաջանալ ու զարգանալ նոր գյուղացիություն—կոլտնտեսային գյուղացիությունը տնտեսությունների 1.0 տոկոսի չափով։[1]

Բոլորովին այլ պատկեր են արտահայտում 1929 թվականի 10 տոկոսային ուսումնասիրության նյութերը։

Այս դեպքում չքավոր ու բատրակ տնտեսությունների քանակը համեմատած 1922 թվականի հետ պակասում է երկու անգամ հասնելով մինչև 33.1 տոկոսի, որպիսի քանակությունը ըստ Հայաստանի Ֆինժողկոմատի նյութերի 1929 թվականին ազատվում է գյուղատնտեսական միասնական հարկից, իսկ միջակների թիվը ավելանում է մինչև 61.6 տոկոսի չափով։

Միաժամանակ ավելանում է կոլտնտեսային գյուղացիության տեսակարար կշիռը, հասնելով 2.0 տոկոսի։ Այս բոլորին զուգահեռ կապիտալիստական էլեմենտների, նրանց շահագործողական տենդենցների սահմանափակման ու արտամղման քաղաքականության հետևողականորեն կիրառելու հետևանքով պակասում է կուլակային տնտեսությունների քանակությունը։ Նրանց տոկոսը 5.85-ից իջնում է մինչև 4,91 տոկոսի չափով.

[1] «Սովետական Հայաստանի 15 տարին» վիճակագրական ժողովածու, էջ 35, Երևան, 1935 թ.։

իսկ առանձին շրջաններում ավելի պակաս օրինակ՝ Կոտայքում 3.53 տոկոս, Ախաայում 3.50 տոկոս, Ղուրգուղուլում 4.25 տոկոս[1] և այլն։

Այսպիսով Հայաստանի գյուղում ևս լիկվիդացվում է գյուղական չքավորությունը, վերանում է կիսաքաղց, անցյալում կալվածատերերի ու կուլակների մոտ ստրկացած մտրոցկանց աղքատ ու անտանելի վիճակը։

Ինչպես գյուղատնտեսության՝ վերականգնման, այնպես էլ նրա սոցիալիստական վերակառուցման շրջանում չքավոր գյուղացիական տնտեսությունների նյութական արտադրության ամրապնդման գործում մեծ դեր խաղաց գյուղատնտեսական վարկը։

Սկզբում անհատական վարկավորման և ապա կազմակերպված Գյուղատնտեսական արտադրական վարկային ընկերությունների միջոցով գյուղատնտեսական բանկը 1923—1924 թվերին վարկ է բաց թողել 1.628.7 հազար ռուբլի,[2] 1924—1925 թվերին՝ 3.526.3 հազար ռուբլի, 1925—1926 թվերին՝ 4.002.8 հազար ռուբլի, որից գյուղատնտեսական զանազան մեքենաներ ու գործիքներ՝ 421.1 հազար ռուբլու,[3] 1926—1927 թվականին 5.521 հազար ռուբլու, որից մեքենաներ 800 հազար ռուբլու։[4]

Բացի այս՝ գյուղացիությանը հսկայական գումարներ էր բաց թողնվել պետական ապահովագրման օրգանների կողմից. այսպես օրինակ՝ 1926—1927 թ. թ. տրվել է 1.746.854 ռուբլի, այս գումարին պետք է ավելացնել նաև 1926 թվականի կարկտահարության փնասները ծածկելու համար Միության Գետապից ստացված 298.8 հազար ռուբլի լրացուցիչ գումարը։

Գյուղատնտեսական վարկը գյուղացիությանը արվում էր սերմացու, քաշող ուժ, կթվող անասուն, գյուղատնտեսական ինվենտար, տրանսպորտ ձեռք բերելու համար։ Գյուղատնտեսական բանկի ու նրա շրջանային բաժանմունքների վրա պարտականություն էր դրված հետևել գյուղատնտեսական վարկի նպատակահարմար ծախսմանը։ Այս գործին մեծ չափով նպաստում էին գյուղերում կազմակերպված չքավորական խմբակները։

Սակայն ամենուրեք չէ, որ այս կարգը պահպանվում էր։ Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին տարիներին, գյուղատնտեսության խիստ քայքայման հետևանքով, չքավոր գյուղացիների մի մասը արտադրական նպատակով ստացած վարկը ծախսում էր սպառողական նպատակների համար։ Հետագայում պետական հսկողության ու սովի վերացման հետևանքով աստիճանաբար վերանում է գյուղատնտեսական վարկի սպառողական նպատակով ծախսելու պրակտիկան։

Այդ գործին մեծապես նպաստում է գյուղատնտեսական վարկը նատուրայով, արտադրամիջոցներով տալը, որը հնարավոր դարձավ միայն երկրի սոցիալիստական ինդուստրացման ու գյուղացիությանը գյուղատնտեսական արտադրական վարկային ընկերությունների մեջ ընդգրկելու հիման վրա։

Հայաստանի բոլշևիկները ղեկավարվելով Լենինի-Ստալինի կոոպերատիվ պլանի հիմնական սկզբունքներով, որ «ոչանը անտեսությամբ կարիքից ազատվել չի լինի»[5] և որ «եթե մենք հին ձևով նստած մնանք մանր

[1] ՀԿ(բ)Գ Արխիվ, ֆոնդ 1, գործ 32, թերթ 36—37։
[2] Այս և հաջորդ թվերը վերցված են 1926 թվականին ՀԿ(բ)Գ Գենակոմի հրապարակած «Խորհրդային Հայաստանի 6-րդ տարեդարձը» գրքից։
[3] Հայկական ՍՍՀ Սրևանի Գետ. Արխիվ, ֆոնդ 183, գործ 69, թ. 86։
[4] Նույն տեղում։
[5] Ленин, Соб. соч. том 24, стр. 540.

տնտեսություններում, թեկուզ և որպես ազատ քաղաքացիներ՝ ազատ հողում, մեզ, միևնույն է, անխուսափելի կործանում է սպառնում», անցնում է գյուղատնտեսական, հատկապես արտադրական կոոպերացիայի կազմակերպմանը։

Հայաստանի Կոմունիստական Պարտիայի 2-րդ համագումարը 1923 թվականի փետրվարի 13—17-ին քննության առնելով գյուղում տարվելիք աշխատանքի հարցը, արձանագրում է, որ «Գյուղացիության և սովետական իշխանության միջև կապը ուժեղացնելու և միաժամանակ մասնավոր առևտրական կապիտալի դեմ պայքարելու համար անհրաժեշտ է ամենալայն կերպով կազմակերպել գյուղատնտեսական կոոպերացիան, թե արտադրական (գյուղատնտեսական արտելներ, ընկերություններ) և թե սպառողական»։

Մի քանի տարվա ընթացքում լայնորեն զարգանում է գյուղատնտեսական կոոպերացիան. այդ երևում է ստորև բերված թվերից։

	1924	1925	1926	1927	1928
Կոոպերատիվ ընկերությունների թիվը	13	86	156	205	280
Կոոպերացված տնտեսությունների թիվը	1384	10363	21348	31677	47430
Կոոպերացված տնտեսությունների տոկոսը գյուղացիական տնտեսությունների նկատմամբ	0,97	6,90	14,21	20.34	31,00

Գյուղատնտեսական կոոպերացիայի անդամների ճնշող մեծամասնությունը ընդգրկված էր վարկային ընկերությունների մեջ։ Այս հանգամանքը հիմնականում պետք է բացատրել նրանով, որ սկզբներում գյուղացիությունը իրեն դեռևս հեռու էր պահում արտադրական կոոպերացիայից, իսկ երկրորդ՝ նրանով, որ արտադրական կոոպերացիան կազմակերպչորեն դեռևս թույլ էր։ Եվ այդ միանգամայն բնական է, գյուղացիությունը դեռևս չէր հասցրել գյուղատնտեսական արտադրական կոոպերացիայի առավելությունների մեջ, որովհետև կոոպերացիան դեռևս գործնականում չէր կարողացել ցույց տալ կոոպերատիվ տնտեսության արտադրա-կազմակերպական առավելությունները։

Թեկուզ այդ վիճակում, գյուղացիությունը միավորվելով վարկային ընկերությունների մեջ, սկիզբ դրեց գյուղատնտեսական արտադրական ընկերությունների արտելների կազմակերպմանը, որը խոշոր չափով նպաստեց գյուղատնտեսության վերականգնման տեմպերի արագացման գործին։

Թե վարկային և թե արտադրական կոոպերացիան աստիճանաբար իր մեջ ընդգրկելով գյուղի չքավոր ու միջակ տնտեսությունները, բարձրացնելով նրանց տնտեսական բարեկեցությունը, գյուղում կապիտալիստական հարաբերությունների սահմանափակման վերաբերյալ պետական միջոցառումների շնորհիվ, կապիտալիստական էլեմենտների արտադրա-տնտեսական գործունեությունը սահմանափակում է ու տեսակարար կշիռը վճռականորեն նվազում է։

[1] Ленин, Соб. соч. том 20, стр. 417.

[2] ՀԿ(բ)Պ Կենտկոմի Արխիվ, ֆոնդ 1, կապոց 34, գործ 5, թերթ 12։

[3] Հայկական ՍՍՌ Երևանի Պետական արխիվ, ֆոնդ 42, գործ 144, թ. 133։

Այսպես, օրինակ՝ դաշտային շրջաններում 1923 թվականին կատարված ուսումնասիրության տվյալներից երևում է, որ չքավոր գյուղացիությունը իր հողերից գյուղի կապիտալիստական տարրերին արենդով հանձնել է ընդամենը 20.070 հեկտար[1] վարելահող, 1925 թվականին՝ 18.947 հեկտար,[2] 1928 թվականին՝ 1749[3] հեկտար, իսկ 1929 թվականին՝ 1458[4] հեկտար։

Նույն պատկերն է ներկայացնում նաև վարձու աշխատանքի կիրառումը գյուղատնտեսության մեջ։ Ոչ լրիվ տվյալներով, 1923 թվականին Հայաստանում ընդամենը հաշվվում էր 1500—1800 բատրակ։ Հետագայում տնտեսական վերելքի ու նոր տնտեսական քաղաքականությամբ գյուղի կապիտալիստական տարրերի նկատմամբ թույլատրված մի շարք արտոնությունների, աշխուժանում են կապիտալիստական տարրերը ու դիմում վարձու աշխատանքից օգտվելու մեթոդին։ Միջակ տնտեսությունների որոշ մասն էլ գյուղատնտեսական աշխատանքներին առանձին սեզոններում մերթ ընդ մերթ դիմում էր վարձու աշխատանքի։ Այսպիսով, 1926 թվականին Հայաստանի գյուղում վարձու բանվորների-բատրակների թիվը հասնում է մինչև 8889 հոգու։ Հետագայում, 1929 թվականի սկզբներին, մոտենալով համատարած կոլեկտիվացման նախադռանը, բատրակներին ու չքավորներին գյուղատնտեսական արտադրական կոոպերացիայի մեջ ընդգրկելու հետևանքով, վարձու բանվորների թիվը գյուղում զգալիորեն կրճատվում է։

	1926	1927	1928
Գյուղատնտեսական բանվոր վարձող տնտեսությունների թիվը . . .	9987	6617	1719
Գյուղատնտեսական վարձու բանվորների թիվը . .	8889	6294	1458
Գյուղատնտեսական բանվոր վարձող տնտեսությունների տոկոսը ռեսպուբլիկայում .	6,5	4,2	1,0
Գյուղատնտեսական բանվորի վարձման դինամիկան 1926 թվի համեմատությամբ .	100	66,3	17,2

Ինչպես տեսնում ենք, թե գյուղատնտեսական բանվոր վարձող տնտեսությունների և թե գյուղատնտեսական բանվորների թիվը 2—3 տարվա ընթացքում պակասում է ավելի քան հինգ անգամ, որը հետևանք էր գյուղի կապիտալիստական տարրերի շահագործողական տենդենցների սահմանափակման ու արտամղման քաղաքականության։

Իսկ այն ժամանակ, երբ երկիրը վճռական շրջադարձ է կատարում դեպի համատարած կոլեկտիվացումը, անհրաժեշտություն է դառնում գյուղի կապիտալիստական տարրերի անհապաղ լիկվիդացումը, որովհետև այլևս նա իր գոյությամբ խանգարում, արգելակում էր գյուղի կոլեկտիվացման աշխատանքներին։ Գուլակությանը որպես դասակարգի արտամղման համար

[1] Հայկական ՍՍՌ Սրևանի Պետական Արխիվ, ֆոնդ 163, գ. 7, թ. 28։
[2] Նույն տեղ, ֆոնդ 163, գործ 17, թերթ 34։
[3] Նույն տեղ, ֆ. 163, գործ 2852, թ. 10—20։
[4] Նույն տեղ, ֆ. 163, գ. 4487, թերթ 1։

բավական չէր նրա սահմանափակման ու դրա հետևանքով նրա առանձին ֆոկատների արտաժղման քաղաքականությունը, պետք էր էլ ավելի վճռական կերպով ղրկել նրան իր գոյացման ու զարգացման արտադրական բոլոր աղբյուրներից, զրկել նրան երկրի արտադրության միջոցներից, աշխատանքային հնարավորություններից օգտվելու իրավունքից։ Հենց որոնում էլ կայանում է նոր քաղաքականության՝ համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակության, որպես դասակարգի լիկվիդացման քաղաքականության առանձնահատկությունն ու ամբողջ էությունը։

Այս բոլորի հետևանքով արմատական տեղաշարժ է կատարվում գյուղական բնակչության դասակարգային, սոցիալական կազմի մեջ ու պարզորոշ դառնում գյուղացիական բնակչության վճռական շրջադարձը դեպի գյուղի կոլեկտիվացման ուղին։

Գյուղատնտեսության ընդհանուր վերելքի, գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման ու գյուղացիության դեպի կոլեկտիվացումը կատարած վճռական շրջադարձի հետ միասին գյուղում սրվում է դասակարգային պայքարը, կուլակությունը ամեն կերպ ձգտում է իր կողմը դրավել, իր ազդեցության տակ գցել միջակ գյուղացիությանը, կուլակությունը դրանով աշխատում է շուռ տալ սովետական գյուղի զարգացման ընթացքը, թեքել նրան սոցիալիստական ուղուց դեպի զարգացման կապիտալիստական ուղին։

Բանվոր դասակարգը ղեկավարվելով Լենինի-Ստալինի ուսմունքով, հետևողական կերպով քայլ առ քայլ ամրապնդում էր դաշինքը բանվոր դասակարգի ու միջակ գյուղացիության միջև, առաջնորդվելով լենինյան այն սկզբունքով, որ առանց միջակ գյուղացիության հետ ամուր դաշինքի, չքավորության վրա հենվելու, առանց սովետական պետության նյութական-կազմակերպական սիստեմատիկ ազդության, հնարավոր չէ գյուղը տանել սոցիալիզմի կառուցման ուղիով։

Այս սկզբունքի հետևողական կիրառումը հասցրեց այն բանին, որ աշխատավոր գյուղացիության ճնշող մեծամասնությունը մեկ երկու տարվա ընթացքում հիմնականում ընդգրկվեց կոլեկտիվ տնտեսությունների մեջ ու սկսեց անմիջականորեն զբաղվել սոցիալիստական շինարարությամբ։

Գյուղատնտեսության կոլեկտիվացման ընթացքը
առ 1/VII յուրաքանչյուր տարվա

Տարիները	Կոլտնտեսությունների քանակը	Կոլտնտեսությունների ընդգրկած անտեսությունների թիվը (հազարներով)	Կոլեկտիվացման աստիճանը	
			ըստ անտեսության	ըստ ցանքային տարածության
1928	55	1,2	0,7	0,5
1929	178	4,4	2,9	2,3
1930	380	15,9	8,5	10,1
1931	720	40,6	21,6	21,6
1932	892	63,1	37,9	39,2
1937	1072	166,7	88,7	92,9
1940	1029	179,3	98,3	99,9
1945	1042	173,2	99,4	99,8

Այսպիսով, աշխատավոր գյուղացիության՝ չքավոր ու միջակ տնտեսությունների ճնշող մեծամասնությունը ընդգրկվում է կոլտնտեսությունների մեջ, լծվում գյուղում սոցիալիստական շինարարության ստեղծագործ աշխատանքի ու կոլտնտեսային կարգերի հաղթանակի ճանապարհով հաստատ պայքար ծավալում կուլակի, կարիքի ու հետամնացության դեմ։

Միջակ գյուղացիության դեպի կոլտնտեսություն գալը նյութապես ու կազմակերպչորեն ամրապնդեց ու էլ ավելի բարձրացրեց գյուղատնտեսության կոլեկտիվացման համար գյուղում ստեղծված շարժումը։

Այսպես օրինակ, եթե 1928 թվականի հունվարին մեկ կոլտնտեսության մեջ ընդգրկված էր գյուղացիական 22 տնտեսություն, ապա 1932 թվականի վերջերին այն հասավ մինչև 71 տնտեսության, 1937 թվականին՝ 156 տնտեսության, իսկ 1940 թվականին՝ 176 տնտեսության։

Նույնը տեղի ունեցավ կոլտնտեսությունների ցանքային տարածությունների ավելացման ընթացքում, եթե 1928 թվականին մեկ կոլտնտեսության ցանքային տարածությունը 25 հեկտար էր, ապա 1933 թվականին դարձավ 177 հեկտար, 1938 թվականին՝ 348 հեկտար, իսկ 1940 թվականին՝ մոտ 412 հեկտար։ Եթե 1928 թվականին կոլտնտեսության մեջ ընդգրկված գյուղացիական տնտեսության նկատմամբ հաշվվում էր 1.01 հեկտար ցանքի տարածություն, ապա 1937 թվականին հասնում է 2.23 հեկտար, 1940 թվականին 3.21 հեկտար։

Այս բոլորը ավելի մանրամասն երևում է ստորև բերված աղյուսակում.

	1928	1932	1937	1940
1. Կոլտնտեսությունների թիվը . .	55	892	1072	1029[1]
2. Կոլտնտեսությունների մեջ ընդգրկված տնտեսությունների թիվը	1,200	63,100	166,700	179,3
3. Միջին մեկ կոլտնտեսությանը գալիս է.				
ա) Տնտեսություններ	22	71	155	174
բ) Ցանքի տարածություն (հեկտարներով)	25	177	348	412
գ) Ձի	4	13	22	34
դ) Խոշոր եղջերավոր անասուն . .	38	110	215	276
ե) Մանր եղջերավոր անասուն . .	114	185	335	533
զ) Խոզ	18	14	21	23
է) Արտադրամիջոցներ (հազար ռուբլի)	19,3	50,5	133,6	180,3
5) Աշխատանքի վաստակումը				
ա) Մեկ տնտեսությանը	—	201	256	27[illegible]
բ) Մեկ աշխատունակին	—	81	114	128

[1] Կոլտնտեսությունների պակասումը բացատրվում է մի շարք գյուղերում եղած երկու կոլտնտեսությունների միացումով։

Ռեսպուբլիկայի գյուղատնտեսության սոցիալ-տնտեսական վերափոփոխման շրջան հանդիսացավ առաջին հնգամյակի վերջին տարիների ժամանակաշրջանը։ Համատարած կոլեկտիվացման ու դրա հիման վրա կուլակության՝ որպես դասակարգի լիկվիդացման լոզունգի հոչակումը ամփոփեց ու հանրագումարի բերեց գյուղատնտեսության մեջ մինչև այդ տեղի ունեցած սոցիալ-տնտեսական փոփոխություններն ու նոր որակ տվեց այդ մեծ փոփոխություններին։

Ինչպես այդ ժամանակ, այնպես էլ հետագայում այս ուղղությամբ հսկայական ծառայություն մատուցեցին նոր կազմակերպված մեքենատրակտորային կայանները։

Մեքենատրակտորային կայանների ցանցի ընդարձակումը, արտադրամիջոցների զարգացումն ու նրանց կողմից կոլտնտեսություններին ցույց տրվող օգնության աճը մեծ ու նշանակալից աշխատանք կատարեց Հայաստանի գյուղի սոցիալ-տնտեսական ու արտադրական պատկերի փոփոխման գործում։

Մեքենատրակտորային կայանների զարգացման հիմնական ցուցանիշները
1930—1945 թվերին (առ համապատասխան տարվա վերջը)

	Ցուցանիշներ	1930	1932	1937	1940	1942	1945
1	ՄՏԿ-ների քանակը .	1	7	24	24	37	38
2	ՄՏԿ-ների սպասարկած կոլտնտեսությունների քանակը . . .	26	270	646	730	745	728
3	Նրանց տնտեսությունների թիվը	1,3	24,6	123,7	148,2	150,7	153,6
4	ՄՏԿ-ների սպասարկած ցանքի տարածությունը (հազար հեկտարներով)	7,8	51,7	272,8	325,4	363,7	341,5
5	ՄՏԿ-ների կատարած ամբողջ աշխատանքը վերածված փափուկ վարի (հազ. հեկտ.) . .	—	31,0	416,9	550,4	368,6	391,7
6	Մեքենատրակտորային պարկի հզորացումը (հաշված հազար ձիաուժի) .	350	3773	17990	25911	22071	20805
7	Կոմբայնի պարկը .	—	2	126	286	285	240

Բերված տվյալներից երևում է, որ մինչև Հայրենական Պատերազմը տարեց տարի ավելացել է մեքենատրակտորային կայանների ցանցը, տեխնիկական հզորությունը, կոլտնտեսություններում նրա կատարած աշխատանքների քանակն ու տեսակը։

Հայրենական Պատերազմի ընթացքում ինչպես երկրի ժողովրդական տնտեսության մի շարք ճյուղերի, այնպես էլ գյուղատնտեսության, այդ թվում և մեքենատրակտորային կայանների արտադրամիջոցների վերականգնումը հասկանալի պատճառներով ետ մնաց և դրա հետևանքով 1941—1945 թվականների ընթացքում մի շարք մեքենաներ ու սարքավորումներ շարքից դուրս եկան, պակասեց մեքենատրակտորային կայանների պարկի ընդհանուր աճը։

Բայց գյուղատնտեսական մեքենաների՝ ու սարքավորումների լավ կազմակերպման ու ռացիոնալ օգտագործման հետեանքով ավելացավ ինչպես մեքենատրակտորային կայանների աշխատանքի ընդհանուր ծավալը, այնպես էլ որակը ու կոլտնտեսությունների ընդգրկումը։

Այսպես օրինակ, առաջին հնգամյակի վերջին տարում ռեսպուբլիկայի կոլտնտեսությունների 30.3 տոկոսն էր ընդգրկված մեքենատրակտորային կայանների սպասարկման ցանցում, երկրորդ հնգամյակի վերջին տարում՝ 60.2 տոկոսը։ Այնուհետև, ռեսպուբլիկայի ամբողջ ցանքատարածությունից մեքենատրակտորային կայանների սպասարկած բաժինը ևս տարեց տարի ավելանում է։ Եթե 1932 թվականին սպասարկման մեջ ընդգրկված էր կոլտնտեսությունների ցանքատարածության 36,4 տոկոսը, 1937 թվականին 73,2 տոկոսը, ապա 1942 թվականին ընդգրկված էր 81,8 տոկոսը։

Ռեսպուբլիկայի մեքենատրակտորային կայանները կարճ ժամանակամիջոցում կարողացան ընդգրկել կոլտնտեսությունների գյուղատնտեսական աշխատանքների ավելի քան չորս հինգերորդ մասը, շնորհիվ այն բանի, որ ինչպես տրակտորային ու գյուղատնտեսական գործիքների պարկը, այնպես էլ հիմնական բոլոր միջոցների օգտագործումը ավելի ինտենսիվ է դառնում, հետևաբար և ամեն կերպ ավելանում է նրանց արտադրողականությունը։

Մեքենատրակտորային կայանների արտադրամիջոցների ընդհանուր արժեքը մեկ մեքենատրակտորային կայանի նկատմամբ 1932 թվականի 502.1 հազար ռուբլուց 1937 թվականին հասնում է 699.3 հազար ռուբլու, իսկ 1940 թվականին՝ 766.0 հազար ռուբլու։

Մեքենատրակտորային կայանների թե ցանքի և թե նրանց արտադրամիջոցների ավելացումը նպաստեց ու պայմաններ ստեղծեց կոլտնտեսությունների սեփական արտադրամիջոցների ավելացման համար։ Մեկ կոլտնտեսության արտադրամիջոցների ընդհանուր արժեքը 1932 թվին 51.6 հազար ռուբլի էր, երկրորդ հնգամյակի վերջին տարում, գյուղատնտեսության կոլեկտիվացման ավարտման ժամանակամիջոցում, 1937 թվականին՝ 215.3 հազար ռուբլի, 1940 թվականին՝ 409.8 հազար ռուբլի, իսկ 1945 թվականին՝ 675.8 հազար։

Այդ նշանակում է, որ մեկ կոլտնտեսության արտադրամիջոցները իրենց արժեքային արտահայտությամբ 1940 թվականին 1932 թվականի նկատմամբ աճել է հինգից ավելի անգամ, իսկ 1945 թվականին աճել է 13-ից ավելի անգամ։

Հայկենտվիճվարի ընտրովի ուսումնասիրության տվյալներից երևում է, որ 1926—1927 թվականներին Հայաստանում չքավոր տնտեսության արտադրամիջոցների արժեքը ընդամենը կազմում էր 120 ռուբլի, միջակ տնտեսությունը՝ 640 ռուբլի, իսկ կուլակային տնտեսությունը՝ 2040 ռուբլի։

Ներկայումս, 1945 թվականի տվյալներով, Հայաստանի կոլտնտեսություններում մեկ կոլտնտեսային ընտանիքի նկատմամբ արտադրամիջոցների արժեքը կազմում է 2373 ռուբլի, 1932 թվականի 506 և 1937 թվականի 860 ռուբլու դիմաց։

Ահա այս բոլորի շնորհիվ կոլտնտեսություններում աճեց հավաքատուն

թե մթերային և թե դրամական եկամուտը, այդ ակնհայտ ցույց է տալիս ստորև բերված աղյուսակը[1]։

Տարիներ	Համախառն եկամուտ հասնում է		
	մեկ կոլտնտեսության (հազ. ռ.)	կոլտնտեսական մեկ ընտանիքին (ռուբլիներով)	մեկ աշխատունակ կոլտնտեսականին (ռուբլիներ)
1932	50.9	719 0	297.0
1937	167.4	1086.0	493.0
1940	287.0	1647.0	831.0
1945	508.6	3060.0	1677.0

Կոլտնտեսությունների համախառն եկամտի սիստեմատիկ ավելացման հետևանքով ստալինյան երեք հնգամյակների ընթացքում աննախընթաց կերպով ավելացավ գյուղատնտեսության ապրանքայնությունը։ 1937 թվականին Հայաստանի կոլտնտեսությունների արտադրության ընդհանուր ապրանքայնությունը հասնում էր 35.8 տոկոսի, 1940 թվականին այդ ավելացավ մինչև 51,2 տոկոսի չափով։

Գյուղատնտեսության սոցիալիստական ու տեխնիկական վերակառուցումը, նրա համախառն ու ապրանքային արտադրանքի հարաճուն աճը և գյուղի սոցիալ-կուլտուրական վերելքը արմատապես փոխեց նրա սոցիալ-տնտեսական դեմքը։ Անցյալի հետամնաց, մանր-ապրանքային, պապենական հետամնաց տեխնիկայի ու ձեռքի աշխատանքի վրա հիմնված գյուղատնտեսությունը դարձավ խոշոր սոցիալիստական ու լայն մեքենայացված գյուղատնտեսություն, իսկ կոլտնտեսականը դարձավ սոցիալիստական շինարարության ակտիվ մասնակիցը։

1 Աղյուսակը կազմելու համար հիմք են ծառայել կոլտնտեսությունների համապատասխան տարիների տարեկան հաշվետվությունները։